Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-895[2]-07.05.2010,18.02.2011-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 189.2 հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. առաջին մասում «ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «հարյուրհիսնապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով» բառերով, իսկ «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով» բառերով,

2.երկրորդ մասում «հարյուրքսանապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրհիսնապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով» բառերով, իսկ «երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «երեքհարհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 189.3 հոդվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1.վերնագրում «ոչ հայերեն ձևավորելը» բառերից հետո լրացնել «գովազդի ընդհանուր պահանջները խախտելը» բառերը,

2.առաջին մասում՝
ա)«ոչ հայերեն ձևավորելը» բառերից հետո լրացնել «գովազդի ընդհանուր պահանջները խախտելը» բառերը,

բ) «հիսնաապատիկից մինչև ութսունապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով» բառերով, իսկ «հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրհիսնապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով» բառերով,

3.երկրորդ մասում «ութսունապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրհիսնապատիկից մինչև երեքհարյուրհիսնապատիկի չափով»

բառերով, իսկ «երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 189.4 հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. առաջին մասում «հիսնաապատիկից մինչև հարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով» բառերով, իսկ «ութսունապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով» բառերով,

2.երկրորդ մասում «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրից մինչև երեքհարյուրապատիկի չափով» բառերով, իսկ «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 189.6 հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. առաջին մասում «հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնաապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկից մինչև երկուհարյուրհիսնապատիկի չափով» բառերով,
2.երկրորդ մասում «երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ պատգամավորներ Լիլիթ Գալստյանի, Արա Նռանյանի, Արծվիկ Մինասյանի, Արմեն Ռուստամյանի, Հրայր Կարապետետյանի, Բագրատ Սարգսյան, Արտյուշ Շահբազյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված և ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2011 թվականի մարտի 2-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին, «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ:

Առաջարկության հեղինակ	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	1. «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշել օրենքի ընդունման թիվը:	Ընդունվել է:
Նախագծի հեղինակներ	2. «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածում լրացվել են «պաշտոնական խոսք» և «ցուցանակ» հասկացությունների սահմանումները:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	«Վարչական իրավախատումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ամբողջ տեքստի համարակալումը համապատասխանեցնել «Իրավական ալտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:	Ընդունվել է: